ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/4 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի	
	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
14	Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ	Անձրևանոցն ունի երկկարանի ներկարված թևքեր, ծալովի օձիք և դարձածալ, օձիքի միացման կարում մշակված է կախիչ: Հետևամասին և առաջամասին մշակված են վրակարված կոկետկաներ: Առաջամասում մշակված են շերտիկով կողքի գրպաններ: Հետևամասն ունի միջնակար, որը նույնպես վերին կտրվածքով է՝ 2 կտորից, և ունի երկասեղանի զարդակար՝ ամբողջ եզրագծով: Անձրևանոցի օձիքը կտրված կանգունակով է: Ձախ առաջամասի աստառին մշակված է շերտիկով ծոցագրպան, որը կոճկվում է օդային օղակով և կոճակով: Անձրևանոցը կապվում է 4-4,5 սմ լայնությամբ գոտիով, որն անցկացվում է կողքերի կարերում մշակված կամրջակների միջով: Գոտին կոճկվում է պլաստմասսայե ճարմանդով և գոտու վրա մշակված կամրջակով: Անձրևանոցը կոճկվում է մաքսային ծառայության խորհրդանիշ 5 կոճակ-օղակներով՝ գաղտնի կոճկվածքով: Լանջափեշի, օձիքի, գոտու, գրպանի, կոկետկաների եզրերը մշակված են 0.1-0.7 սմ լայնությամբ զուգահեռ զարդակարերով: Գաղտնի կոճկվածքը մշակվում է 6 սմ լայնությամբ լայն զարդակարերով: Անձրևանոցի երեսացուն մուգ կապույտ գույնի գործվածքից է, անջրանցիկ՝ անձրևանոցային (210 գր. քառ. մետր խտությամբ, 100% Պ/Է): Աստառը՝ մետաքսյա, ԳՕՍՏ-2272-96 8-C5-ԲՇ արտիկուլի մուգ կապույտ գույնի կտորից: Ներդիրը մշակված է և ունի կոճակներով կոճկվող հանովի միջուկ՝ բրդյա գործվածքից: Ներքևի

		մասում ունի 20 սմ բացվածք: Ձախ թևին կարվում է մաքսային ծառայության տարբերանշանը, ուսերին՝ գոտեմակօղեր՝ ուսադիրների համար: Այլ պայմաններ. *Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված: Ապրանքի տեղափոխումը, բեռնաթափումը և տեսակավորումը իրականացնում է Կատարողը: **Չափսերը տրամադրվելու են պատվիրատուի կողմից: *** Կատարողը պետք է ունենա կտորների համապատասխան արտիկուլների հավաստագիր: **** Ապրանքը պետք է լինի առանձին փաթեթավորված (կոշիկների յուրաքանչյուր զույգը առանձին արկղերով), յուրաքանչյուրի վրա տեսանելի գրված լինի չափսը (հասակը), ապրանքի և արտադրողի ամբողջական անվանումը: *****Ապրանքի վրա պետք է կարված լինի պիտակ, որի վրա նշված լինի արտադրողի անվանումը, կտորի բաղադրությունը, չափսը և այլն:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Канакери кари фабрика в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/4 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар	
	наименование производителя	технические характеристики
14		